ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

1.	Անունը, ազգանունը	Ավագ Ավանեսյան
2.	Զբաղեցրած պաշտոնը	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ
3.	Գործուղման վայրը և ժամկետը	2019 թվականի օգոստոսի 26-29 Թուրքմենստան (Աշգաբադ)
4.	Հրավիրող կողմը	Թուրքմենստանի արտաքին գործերի նախարարություն
5.	Գործուղման նպատակը աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը	Հայաստան-Թուրքմենստան երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների խթանում
6.	Քննարկված թեմաները	Հայաստան-Թուրքմենստան երկկողմ առևտրատնտեսական հարաբերությունների խթանման նպատակով աշխատանքային պլանի և դրանում ներառված միջոցառումների իրականացման ճանապարհային քարտեզի տարբերակների շուրջ նախնական պայմանավորվածությունների ձեռքբերում
7.	Հանդիպումները, ելույթները, բարձրացված, քննարկված հարցերը	Տեղի ունեցան հանդիպումներ Թուրքմենստանի ֆինանսների և էկոնոմիկայի, ինչպես նաև Թուրքմենստանի արդյունաբերության և հաղորդակցությունների նախարարություններում: Ֆինանսների և էկոնոմիկայի նախարար պարոն Բատիր Բազարովի և նախարարության մի շարք բարձրաստիճան պաշտոնյաների հետ հանդիպման ընթացքում ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ պարոն Ա. Ավանեսյանն իր ելույթում մասնավորապես նշեց, որ մեր երկրների միջև առևտրաշրջանառության ծավալն իրականում մի քանի անգամ ցածր է այն ներուժից, որին կարող ենք հասնել համակարգված և հետևողական աշխատանքի դեպքում: Արդյունաբերության և հաղորդակցության նախարարի տեղակալ պարոն Բայմիրատ Աննամամեդովի հետ հանդիպման ընթացքում ՀՀ բարձր տեխնոլոգիաների արդյունաբերության նախարարի տեղակալ պարոն Գ. Վարդանյանը մանրամասն ներկայացրեց բարձր տեխնոլոգիաների ոլորտում Հայաստանի հնարավորությունները, հայկական ստարտափների Թուրքմենստանում ներդրման հնարավորությունները և այլն:
8.	Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները,	Հանդիպումների ընթացքում պայմանավորվածություն ձեռք բերվեց կազմել երկու կողմերի համար հետաքրքրություն ներկայացնող ապրանքների և

	պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը	ծառայությունների ցանկեր, ճշտել մատակարարումների հնարավոր ծավալները: Նախնական հավանության արժանացավ Հայաստանում և Թուրքմենստանում առևտրային տներ հիմնադրելու գաղափարը: Առանձնացվեցին հինգ ծրագրեր, որոնք ներկայումս առավել կենսունակ կարող են լինել երկուստեք հետաքրքրությունների շրջանակներում: Հատուկ անդրադարձ եղավ առևտրային գործարքներում թուրքմենական արժույթի փոխարկման խնդրին, քննարկվեցին դրա լուծման հնարավոր տարբերակներ:
9.	Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները	Պայմանավորվածություն ձեռք բերվեց քննարկված հարցերը ներառել առաջիկա հայ-թուրքմենական միջկառավարական հանձնաժողովի նիստի օրակարգում:
10.	Գործուղվողները	ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ավագ Ավանեսյան ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի տեղակալ Գեղամ Վարդանյան ՀՀ էկոնոմիկայի նախարարի խորհրդական Գագիկ Մկրտչյան ՀՀ արտաքին գործերի նախարարության Եվրասիական տարածաշրջանի վարչության երկկողմ հարաբերությունների բաժնի կցորդ Լիլիթ Մովսեսյան
11.	Ստորագրությունը, ամսաթիվը	02.09.2019թ.